ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ԲԴԽ-1-Ո-1
2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 94-րդ հոդվածի 1-ին մասով, 166-րդ հոդվածի 19-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի կողմից «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված և ընդունման ենթակա իրավական ակտերն ընդունելու ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018թ. ապրիլի 9
ք. Երևան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
բարձրագույն դատական խորհրդի
2018թ. ապրիլի 9-ի թիվ ԲԴԽ-1-Ո-1
որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական խորհրդի կողմից «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված և ընդունման ենթակա իրավական ակտերն ընդունելու

	«ՀՀ դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի հոդվածը	Բարձրագույն դատական խորհրդի որոշման անվանումը	Իրավական ակտն ընդունելու վերջնաժամկետը
1.	89-րդ հոդվածի 1-ին մասի 43-րդ կետ	Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին	2018թ. մայիսի 2-րդ տասնօրյակ
2.	41-րդ հոդվածի 1-ին մաս	Դատական գործերի բաշխման հատուկ համակարգչային ծրագրի շահագործման կարգը սահմանելու մասին	2018թ. հունիսի 3-րդ տասնօրյակ
3.	21-րդ հոդվածի 4-րդ մաս	Առանձին տեսակի գործերի ցանկը, յուրաքանչյուր դատարանի համար նման գործեր քննող դատավորների քանակը և ընտրության կարգը սահմանելու մասին	2018թ. հունիսի 3-րդ տասնօրյակ
4.	17-րդ հոդվածի 6-րդ մաս	Դատավորի կնիքի և դրոշմակնիքի նկարագրությունը և տրամադրման կարգը սահմանելու մասին	2018թ. հուլիսի 1-ին տասնօրյակ
5.	18-րդ հոդվածի 2-րդ մաս	Դատական իշխանության պաշտոնական կայքի կառուցվածքը սահմանելու մասին	2018թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ
6.	18-րդ հոդվածի 3-րդ մաս	Դատական իշխանության պաշտոնական կայքի վարման կարգը և կայքում զետեղվող այլ տեղեկատվության ցանկը սահմանելու մասին	2018թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ
7.	11-րդ հոդվածի 9-րդ մաս	Դատական իշխանության պաշտոնական կայքում գործի և դրա ընթացքի վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկությունների ցանկը և հրապարակման կարգը սահմանելու մասին	2018թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ
8.	11-րդ հոդվածի 10-րդ մաս	Դատական իշխանության պաշտոնական կայքում անձնական տվյալների ապանձնավորման կարգը սահմանելու մասին	2018թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ
9.	19-րդ հոդվածի 4-րդ մաս	Դատական գործի վիճակագրական քարտի լրացման կարգը սահմանելու մասին	2018թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ
10.	57-րդ հոդվածի 5-րդ մաս	Իր մշտական բնակության վայրից դուրս պաշտոնի նշանակված դատավորին իր դիմումի հիման վրա՝ Կառավարության կողմից սահմանված կարգով, չափով և ժամկետներում տվյալ վայրում բնակարանի	2018թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ

		վարձին համարժեք փոխհատուցում տրամադրելու դեպքերը սահմանելու մասին	
11.	58-րդ հոդվածի 9-րդ մաս	Դատավորին արձակուրդ տրամադրելու կարգը սահմանելու մասին	2018թ. հունիսի 2-րդ տասնօրյակ
12.	60-րդ հոդվածի 3-րդ մաս	Դատավորի անձնական գործում ներառվող այլ տեղեկությունները սահմանելու մասին	2018թ. դեկտեմբերի 1-ին տասնօրյակ
13.	61-րդ հոդվածի 4-րդ մաս	Դատավորի աշխատանքային ծանրաբեռնվածությամբ պայմանավորված՝ լրացուցիչ օգնական և գործավար ներգրավելու դեպքերը և կարգը սահմանելու մասին	2018թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ
14.	89-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետ	Դատական իշխանությանը վերաբերող նորմատիվ իրավական ակտերի նախագծերը դատարաններում շրջանառելու կարգը հաստատելու մասին	2018թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ
15.	89-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետ	Զանգվածային լրատվության միջոցների հետ Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների փոխհարաբերության կանոնները հաստատելու մասին	2018թ. հունիսի 1-ին տասնօրյակ
16.	89-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետ	Դատարան փաստաթղթերի հանձնման, ըստ տեսակների՝ գործերի դասակարգման և դատարանների գործավարության այլ կանոնները հաստատելու մասին	2018թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ
17.	89-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետ	Դատարանի նիստերի դահլիճի և դատավորի աշխատասենյակի տիպային կահավորման նկարագրությունը սահմանելու մասին	2018թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ
18.	89-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետ	Գործերի քննության միջին տևողության ուղենիշային ժամկետները՝ ըստ գործերի առանձին տեսակների և բարդության սահմանելու մասին	2018թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ
19.	89-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետ	Դատավորի ծանրաբեռնվածությունը հաշվարկելու կարգը, ինչպես նաև դատավորի ծանրաբեռնվածության չափորոշիչները սահմանելու մասին	2018թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ
20.	89-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետ	Սինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնող դատավորների հերթապահություն սահմանելու կարգը սահմանելու մասին	2018թ. հուլիսի 1-ին տասնօրյակ
21.	89-րդ հոդվածի 1-ին մասի 33-րդ կետ	Դատական ծառայության և դատական կարգադրիչների ծառայության պաշտոնների անվանացանկը և պաշտոնների անձնագրերը հաստատելու, ինչպես նաև դատական դեպարտամենտի հաստիքների քանակը սահմանելու մասին	2018թ. հունիսի 2-րդ տասնօրյակ
22.	89-րդ հոդվածի 1-ին մասի 34-րդ կետ	Դատական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար փակ մրցույթի անցկացման ընթացակարգը, ինչպես նաև բաց մրցույթում թեստավորման, հարցազրույցի անցկացման և թեկնածուների հատկանիշների գնահատման ընթացակարգը, մրցութային	2018թ. հոկտեմբերի 1-ին տասնօրյակ

		հանձնաժողովների ձևավորման ընթացակարգը և դրանց գործունեության կարգը սահմանելու մասին	
23.	89-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետ	Դատական ծառայողի գործունեության գնահատման կարգը, չափանիշները և բնութագրի ձևը սահմանելու մասին	2018թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ
24.	89-րդ հոդվածի 1-ին մասի 36-րդ կետ	Դատական ծառայողների և դատական կարգադրիչների վերապատրաստում անցկացնելու կարգը հաստատելու մասին	2018թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ
25.	89-րդ հոդվածի 1-ին մասի 38-րդ կետ	Դատական ծառայողների և դատական կարգադրիչների ուսումնառության ժամաքանակը սահմանելու մասին	2018թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ
26.	89-րդ հոդվածի 1-ին մասի 39-րդ կետ	Դատական կարգադրիչներին որպես խրախուսանք շնորհվող կրծքանշանների տեսակները և ձևերը սահմանելու մասին	2018թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ
27.	89-րդ հոդվածի 1-ին մասի 40-րդ կետ	Դատական կարգադրիչի կրծքանշանի տեսակները և ձևերը սահմանելու մասին	2018թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ
28.	89-րդ հոդվածի 1-ին մասի 41-րդ կետ	Դատական կարգադրիչներին համազգեստ հատկացնելու և կրելու կարգը սահմանելու մասին	2018թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ
29.	89-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետ	Դատական կարգադրիչների ծառայությունում առաջին անգամ որպես դատական կարգադրիչ ծառայության անցնող քաղաքացիների երդման կարգը սահմանելու մասին	2018թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ
30.	89-րդ հոդվածի 1-ին մասի 44-րդ կետ	Բարձրագույն դատական խորհրդի և դատարանների շենքերի անցագրային կարգը և անվտանգության կանոնները սահմանելու մասին	2018թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ
31.	137-րդ հոդվածի 2-րդ մաս	Դատավորի գործունեության արտահերթ գնահատման կարգը և ժամկետները սահմանելու մասին	2018թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ
32.	139-րդ հոդվածի 2-րդ մաս	Դատավորի գործունեության գնահատման մեթոդաբանությունը, գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքման կարգը և դատավորների գործունեության գնահատման համար անհրաժեշտ այլ մանրամասները սահմանելու մասին	2018թ. նոյեմբերի 1-ին տասնօրյակ
33.	97-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ	Ստանդարտացված թեստային համակարգերով ստուգվող լեզվական գիտելիքների՝ համապատասխան իմացության մակարդակը սահմանելու մասին	2018թ. սեպտեմբերի 1-ին տասնօրյակ
34.	98-րդ հոդվածի 1-ին մաս	Որակավորման ստուգմանը մասնակցելու համար ներկայացվող հայտի ձևը սահմանելու մասին	2018թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ
35.	98-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետ	Որակավորման ստուգմանը մասնակցելու համար ներկայացվող հայտի ձևին կից ներկայացվող համաձայնության ձևը սահմանելու մասին	2018թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ
36.	99-րդ հոդվածի 2-րդ մաս	Դատավորի թեկնածուների հավակնորդների վերաբերյալ ՀՀ	2018թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ

		դատական օրենսգրքին համապատասխան հարցումների իրականացման կարգը, հարցման շրջանակում ընդգրկված մարմինների ցանկը և հարցման նպատակով կիրառվող գրավոր հարցաթերթիկների ձևը սահմանելու մասին	
37.	104-րդ հոդվածի 6-րդ մաս	Որակավորման գրավոր քննության աշխատանքները ստուգելու և գնահատելու նպատակով ստեղծված հանձնաժողովի աշխատանքը գաղտնի իրականացնելու անհրաժեշտ մանրամասները սահմանելու մասին	2018թ. օգոստոսի 1-ին տասնօրյակ
38.	36-րդ հոդվածի 1-ին մաս, 89-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետ, 166-րդ հոդվածի 24-րդ մաս	Դատական դեպարտամենտի կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին	2018թ. մայիսի 3-րդ տասնօրյակ
39.	40-րդ հոդվածի 1-ին մաս, 89-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետ, 166-րդ հոդվածի 17-րդ մասի 2-րդ կետ	Դատական կազմերը ձևավորելու, դատական կազմի բացակայող դատավորներին փոխարինելու կարգը սահմանելու մասին	2018թ. հուլիսի 1-ին տասնօրյակ
40.	40-րդ հոդվածի 1-ին մաս, 166-րդ հոդվածի 17-րդ մասի 2-րդ կետ	Սինչդատական քրեական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում ներկայացված միջնորդությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդությունների բաշխման, վերաբաշխման առանձնահատկությունները, ինչպես նաև դրանք քննող դատավորների ցանկը սահմանելու մասին	2018թ. հուլիսի 1-ին տասնօրյակ
41.	45-րդ հոդվածի 2-րդ մաս, 166-րդ հոդվածի 17-րդ մասի 2-րդ կետ	Օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու մասին միջնորդություններ քննող դատավորների համար հավասարաչափ բաշխման չափանիշներից նվազեցման տոկոսաչափ սահմանելու մասին	2018թ. հուլիսի 1-ին տասնօրյակ
42.	46-րդ հոդվածի 2-րդ մաս, 166-րդ հոդվածի 17-րդ մասի 2-րդ կետ	Դատավորի անաշխատունակության, արձակուրդի ժամանակահատվածում և դատարանում դատավորների թվի ավելացման հետևանքով գործի վերաբաշխման դեպքերն ու կարգը սահմանելու մասին	2018թ. հուլիսի 1-ին տասնօրյակ
43.	100-րդ հոդվածի 1-ին մաս, 6-րդ մաս, 105-րդ հոդվածի 2-րդ մաս	Որակավորման գրավոր քննության ձևը, քննական հարցերի կառուցվածքը և բովանդակության նվազագույն պահանջները, գրավոր քննության կազմակերպման և անցկացման կարգը (անհրաժեշտության դեպքում նաև գրավոր քննությունը տեխնիկական միջոցներով անցկացնելու կարգը), այդ թվում՝ քննական	2018թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ

		նյութերի բաշխման, քննության ընթացքի, իրավական կամ այլ փաստաթղթերից կամ տեխնիկական միջոցներից օգտվելու, քննական աշխատանքները ստուգելու և գնահատելու կարգը, գրավոր քննության արդյունքներով նվազագույն անցողիկ միավորը սահմանելու մասին	
44.	100-րդ հոդվածի 4-րդ մաս	Գրավոր քննություն անցկացնելու համար գրավոր առաջադրանքների տարբերակների նվազագույն քանակը սահմանելու մասին	2018թ. սեպտեմբերի 2-րդ տասնօրյակ
45.	166-րդ հոդվածի 27-րդ մաս	Դատավորների առաջին հերթական գնահատման ժամանակացույցը հաստատելու մասին	2019թ. հունվարի 1-ին տասնօրյակ